

ԳԻՏԱԱԹԵԻՍԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Գ. Ա. ՔԱՐԱՅԱՆ

Գիտաաթեիստական դաստիարակության իրական գործընթացում միահյուսված և փոխադասմանավորված են տարրեր մակարդակների և պլանների հարաբերություններ՝ սոցիալական, բարոյական, գեղագիտական, հոգեբանական, մանկավարժական և այլն: Գիտաաթեիստական դաստիարակության հաշտությունը մեծ շահով պայմանավորված է կրոնական գիտակցության և վարքագծի յուրահատկության հաշվառմամբ: Ուստի առանց կրոնականության հոգեբանությունը, կրոնական գիտակցությունն ու վարքագիծը ուսումնասիրելու հնարավոր չէ ստեղծել աթեիստական դաստիարակության գիտական տեսություն և այն իրագործել պրակտիկայում:

Կրոնը, որպես հասարակական գիտակցության ձև, իր մեջ ներառում է երկու մակարդակ՝ կրոնական գաղափարախոսությունը և կրոնական հոգեբանությունը:

Կրոնական գաղափարախոսությունը մեր զրականության մեջ բնութագրվում է որպես կուլտուրամարանության, ընդհանրացված գաղափարների մի համակարգ, որտեղ որոշակի արտացոլվում է տվյալ հասարակության բազիսը: Նրա վրա մեծ ազդեցություն են գործում քաղաքականությունը, բարոյականությունը և գաղափարախոսության մյուս ձևերը: Գրանց հասնմատույնում կրոնը ավելի հեռու է գտնվում բազիսից, ունի հարաբերական ինքնուրույնություն և իր բովանդակության մեջ հնից ժառանգած ավելի շատ պատկերացումներ է պահպանում:

Կրոնական գաղափարախոսության պահպանողականությունը հատկապես ցայտուն է դրսևորվում սոցիալիստական հասարակության պայմաններում, որտեղ չկան կրոնը ծնող արմատական սոցիալական պատճառներ: Կրոնական գաղափարախոսությունը սոցիալական առաջընթացի, գիտության և տեխնիկայի նվաճումների ազդեցությամբ աստիճանաբար զիջում է իր դիրքերը: Մոդեռնիստական որոշ միտումներ հազիվ թի կարողանան իրոյն նրան: Այդ հասկանալով, աստվածաբաններն ավելի ու ավելի հաճախ են դիմում հավատացյալների հոգեբանությունը, անհատի սոցիալական գործունեության զգայական ոլորտին՝ ընդգծելով մարդու հոգևոր կյանքի անհատականությունը, անկրկնելիությունը:

Կրոնական կազմակերպությունները, ինչպես նշում է Գ. Մ. Ուզրիսովիչը¹, պաշտամունքային պրակտիկայում լայնորեն օգտագործում են որոշ հոգեբանական գործառական համակարգեր (գինամիկ ստերեոտիպեր), այսպիսով շարաշահելով հավատացյալների կրոնական զգացմունքները: Ահա թե ինչու գիտաաթեիստական աշխատանքի կազմակերպման հետագա կատարելագործման և աթեիստական հայացքների ու համոզմունքների բարձրացման համար պահանջվում է աթեիստական դաստիարակության հոգեբանական հիմունքների գիտական մշակում: Հենց սրանով է բացատրվում վերջին քսանամյակում մեր երկրում այս պրոբլեմի նկատմամբ աճող հետաքրքրությունը:

Կրոնական հոգեբանության մեջ զգացմունքային գործընթացները մեծ դեր են խաղում: Սա հասարակական գիտակցության այն մակարդակն է, որ ավելի սերտ է կապված հավատացյալների անհատական գիտակցության հետ և առավելագույն ազդեցություն է գործում նրա վրա: Կրոնական հոգեբանությունը կարելի է սահմանել որպես հայացքների, պատկերացումների, զգացմունքների, սովորությունների, հավատալիքների, դիրքորոշումների ամբողջություն, որոնք շճանաչված և այդ պատճառով անհասկանալի բնական ու հասարակական մի շարք երևույթների հանդեպ մարդկանց անօգնականության ու անզորության տարևրային, զգայական, շճամկարգված արտացոլումն են: Այն հանգամանքը, որ անհնարին է հավատացյալի գիտակցության մեջ գոյություն ունեցող աստու գաղափարը գործնական և փորձարարական եղանակով համադրել բուն աստու հետ, որն աստվածաբանների պնդմամբ իրապես գոյություն ունի, ինչպես նաև այն, որ անհնարին է բանականորեն ապացուցել աստու գոյությունը (նման փորձեր քննադատության չեն դիմացել), բոլոր ժամանակներում աստվածաբաններին ստիպել և ստիպում է իրենց

¹ Д. М. Угринович. Философские проблемы критики религии, М., 1965, с. 38.

ուշադրությունը կենտրոնացնելու մարդուն հասուկ, իբր բնածին կրոնական զգացողության վրա: Ահա թե ինչու կրոնի բուրժուական հոգեբանությունը բոլոր ժամանակներում մեծ ուշադրություն է հատկացրել կրոնական զգացումների պրոբլեմին: Այս հարցում թե՛ անցյալի, թե՛ ժամանակակից աստվածաբանները միաբան են: Ասենք, դա հասկանալի է, չէ՞ որ նրանց պատկերացմամբ խոսքը անհատի կրոնական հավատի աղբյուրի մասին է:

Կրոնի հոգեբան և աստվածաբան Գ. Բելիկովը, ընդգծելով կրոնական զգացողությունների բնածին լինելը, գրել է. «Կրոնական պահանջումներն արժատավորված է մարդկային լուծվյան մեջ: Այն անբաժանելի է մեզից, քանի որ մենք այդ պահանջումների հետ ենք ծնվել, մարդն այդ պահանջումների հետ միասին է ստեղծվել»²: Այդ թեկզբը քրիստոնեության հիմնադրույթն է, հավատի անկյունաքարը:

Մատենադարանական փիլիսոփայությունը և սովետական հոգեբանությունը դիտության նվաճումների հիման վրա ժխտում են մարդու մեջ բնածին կրոնական զգացողությունների առկայությունը: Կ. Մարքսը «Փեզիսների Ֆոյերբախի մասին» երկում նշել է. «...կրոնական զգացողությունն» ինքը հասարակական արգասիք է...»³: Իսկ Գ. Վ. Պլեխանովն այսպես է բնութագրել կրոնական զգացողությունների և տրամադրությունների առաջացման սոցիալական պատճառները. «Ընչ վերաբերում է կրոնական տրամադրություններին, ապա դրանք արժատավորված են մարդկանց՝ հասարակական տվյալ հարաբերությունների հողի վրա աճող զգացողությունների ու ձգտումների մեջ և փոփոխվում են այդ հարաբերությունների փոփոխմանը զուգընթաց»⁴:

Հավատացյալի հոգեբանության գլխավոր առանձնահատկությունը կրոնական հավատի առկայությունն է: Այդ երևույթի լուծվյան ճիշտ բնույթումը միանգամայն անհրաժեշտ է դաստիարակ ամբիստին՝ հավատացյալների հետ արդյունավետ աշխատանք տանելու համար, քանի որ հավատը մարդկային գիտակցության կարևորագույն տարրերից մեկն է:

Չարաշահելով մարդկային հավատի գոյության փաստը՝ աստվածաբանները ամեն մի հավատ հայտարարում են կրոնական: Աստվածաբան Ն. Պ. Սոկոլովը թեպետ ձեռնարկներն առանձնացնում, տարրերակում է ընդհանրապես հավատ հասկացությունը կրոնական հավատից, սակայն դրանք ներկայացնում է որպես միևնույն երևույթի տարրեր մակարդակներ: Ըստ նրա՝ կրոնական հավատը հավատի մյուս տեսակների համեմատությամբ ավելի ընդհանուր հասկացություն է: Բնորոշ է, որ աստվածաբանությունը միշտ համառոտն է ընդգծել է հավատի զգայական բնույթը. «...եթե հավատը պատճառաբանվում է զգացողությամբ և ծնունդ տալիս մի շարք նոր զգացումներին և կրքերին, ապա դա չի՞ պարտավորեցնում մեզ, արդյոք, ընդունելու, որ հավատն ինքը զգայական հիմք ունի»⁵:

Գիտական մոտեցմամբ բացահայտվում է հավատի աստվածաբանական մեկնության ողջ սնանկությունը: Այն, որ աստվածաբանությունը շեշտը դնում է հավատի զգայական կողմի վրա, նախ և առաջ վկայում է այդ բարդ հոգեբանական երևույթի կարևոր կողմերից մեկը առաջին պլան մղելու միտումնավորության մասին: Համակողմանի գիտական վերլուծությունը երևան է հանում հավատի ինչպես զգայական, այնպես էլ բանական դիտանկյունները: Գրանից բացի, հանդես գալով որպես մարդու վարքագծի դրդապատճառ, հավատն իր մեջ ներառնում է նաև կամային գործոն:

Հայտնի է, որ զգացումներին դրսևորումը պայմանավորված է իմացության մակարդակով: Չէ՞ որ, Լեյն մաշգը շփոխի, թե ինչի հետ գործ ունի, չի կանխատեսում խր և օրյակտները միջև կատարվող փոխազդեցության հետևանքները, ապա նա ընդունակ չէ զգալու ոչ ուրախություն, ոչ էլ վիշտ:

Կրոնական համալիրի տարրերից մեկը, որի միջոցով հարուցվում և պահպանվում են կրոնական հավատը, կրոնական զգացողությունները և հույզերը, պաշտամունքն է: Պաշտամունքը բարդ և բազմաբնույթ երևույթ է: Այն ներառնում է կրոնական արարողություններն ու ծիսակատարությունները՝ աղոթքը, անհծքը, զոհաբերությունը, ժամերգությունը և այլն: Ինչպես կրոնը, պաշտամունքը ևս ծագել է նախնադարյան հասարակարգում, երբ մարդիկ անգոր էին բնության դեմ մղած պայքարում: Նրա սկզբնական ձևերն են մոգական, հմայական արարողությունները, բնության ուժերի, բույսերի, կենդանիների, առանձին առարկաների երկրպագությունը, նախնիների պաշտամունքը:

Ժամանակակից ամեն մի կրոնում պաշտամունքը էական դեր է խաղում որպես կրոնական կողմնորոշման միջոց: Անհրաժեշտ է ընդգծել, որ այն աչքի է ընկնում ավելի ուժեղ պահպանողականությամբ: Կրոնի հայտնի հետազոտող Ֆրանսիացի Շ. Էնշլենը, նշելով այդ փաստը՝ գրել է. «Ընթաց կրոնն ամբողջությամբ վերցրած հետադիմական է, ապա պաշտամունքը, ծիսակատարությունները, անվերջ կրկնվում են միևնույն ձևերով, նրա առավել հետադիմական տար-

² Д. Беликов. Жизненность религии, Петроград, 1916, с. 7.

³ К. Маркс, Ф. Энгельс. Соч. т. 3, с. 3.

⁴ Г. В. Плеханов. Изб. филос. произв. в 5-и томах, т. 2, 1957, с. 362.

⁵ Н. П. Соколов. Вера (психологический этюд), М., 1902, с. 13.

րերն են, որոնք դիմադրում են բոլորից երկար և նույնիսկ այն ժամանակ, երբ կրոնը ծնող տնտեսական հիմքն արդեն անհետացել է... Պաշտամունքն առանձնապես վտանգավոր է այն պատճառով, որ կրոնի արտաքին դրսևորումն է, այն ներլիափանցում է զանգվածների մեջ, արբեցում նրանք պատրանքային հույսերով»:

Պաշտամունքն իր մեջ համառոտում է գործոնների մի ամբողջություն, որը նախատեսված է մարդու վրա առավելագույն հուզական ներգործություն ունենալու համար: Որոշակի հույզերի առաջացման նախադրյալներ են ինչպես հավատացյալի աղավաղված, աղճատված գիտակցությունը, այնպես էլ պաշտամունքային արարողությունների կատարման բուն իրադրությունը: Հուզական ներգործությունն ուժեղանում է, երբ արարողությունները կատարվում են լիարժեք, հատուկ սարքավորված պաշտամունքային հաստատություններում: Այստեղ գործում են սոցիալական հաղորդակցության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են վարակումը, ներշնչումը, էմպատիան և այլն:

Կրոնի ներգործությունը հատկապես ուժեղ է լինում, երբ այն զուգակցվում է հավատացյալի ունեցած կրոնական պատկերացումների հետ: Հավատացյալի վրա ազդում են թե՛ ծեսերի կատարման իրադրությունը, թե՛ դրանց ուղեկցող արարողությունները՝ աղոթքները, ծնրադրությունը, երգեցողությունը և այլն: Ողբի և սյրերգերի ձևով տեղի ունեցող լիցքաթափումը հոգե-նախորհին կարող է որոշ չափով, թեև ոչ թե՛ ժամանակավորապես, բայց այնուամենայնիվ թեթև-վացնել վիշտը: Հենց այդ նպատակին է ուղղված յուրաքանչյուր կոնկրետ ծիսակատարության սցենարը: Հենց դա է նրա հուզական ներգործության աստաղը:

Եկեղեցու սպասավորներն օգտագործում են արտաքին ազդեցության և զգայական զրբ-զրոման օրյակայիվ կապը: Միակատարության սցենարը կազմված է այն հաշվով, որ առավելագույն զգայական ննշում գործադրվի մարդկանց վրա: Բոլոր ծիսակատարությունները, ինչպես նաև բազմաթիվ եկեղեցական տոները կազմակերպվում են հնարավորին չափ հանդիսավոր, աչքի դարձող զունսպեղծությամբ և շքեղությամբ:

Մեր օրերում կրոնական գաղափարախոսները, փորձելով ինչ-որ ձևով համընթաց քայլել ժամանակի հեռու կրթնի ձևափոխումն են ավանդական պաշտամունքային արարողությունները, դրանք դարձնում բավելի արդյական: Դրա պատճառը սոցիալական և գիտատեխնիկական առաջընթացին, հասարակության և անհատական ըլափակցություն համապատասխան փոփոխություններին հարմարվելու ձգտումն է: Օրինակ, եկեղեցիների ճարտարապետական կառույցներում հաշվի են առնվում շինարարական արվեստի վերջին նվաճումները: Այդպիսին են ԱՄՆ-ի և ԳՏՀ-ի շատ եկեղեցիներ: Բուն ժամերգությունը համեմատվում է տեխնիկայի վերջին նորույթներով, ավանդական երգեհոնի փոխարեն այն կատարվում է էլեկտրալիթաոնի կամ ջազ-նվագախմբի նվագակցությամբ:

Նման արդյակախաչույթը վկայում է եկեղեցու ազդեցության անկման և կրոնի ընդհանուր ձգնաժամի մասին: Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր կոնկրետ փուլում եկեղեցու կիրառած հարմարվողական հնարքները կարող են տալ որոշակի, թեև ոչ թե՛ ժամանակավոր արդյունք, ուստի պետք է ժամանակին միջոցներ ձեռնարկել դրանց շեղորացման համար:

Կրոնական-հոգեբանական մշակման գործում կարևոր դեր են խաղում եկեղեցական քարտեզները:

Բուն քարտեզը յուրօրինակ «գաղափարություն» է՝ սովորաբար հրատապ թեմայով, որը հարմարեցվում է կրոնական որևէ տոնի և կապվում այս կամ այն ծիսակատարության հետ: Քարտեզի ազդեցությունը կարող է տարբեր լինել՝ կախված լսարանի և հենց քարտեզի պատրաստվածության աստիճանից: Քարտեզում, մանավանդ լավ հոնտորի կարգացած քարտեզում, առկա են ունկնդիրների վրա ներգործելու բոլոր գաղափարական հնարքները: Երբեմն նրանում դերակշռում է զգայական-հուզական կողմը (ինֆորմացիան թե՛ է, բայց կարգացվում է «սրտի փրկ-ձուկով»), այլ դեպքերում այն ունենում է ավելի ինֆորմացիոն բնույթ: Ունկնդիրների կազմը քարտեզը միշտ հաշվի է առնում:

Միականներին շկորցնելու համար հարկադրված լինելով ընթանալ ժամանակին համաքայլ՝ եկեղեցին իր քարտեզները համեմատել է գիտության նորագույն նվաճումների, տեխնոլոգիական հետազոտությունների և այլնի վերաբերյալ տվյալներով: Հասկանալի է, այդ տվյալները բեկվում են կրոնական ընկալման պրիզմայով և ընթերցողներին են մատուցվում մշակված, կրոնական գիտակցությանը հարմարված ձևով: Քարտեզի ընթացքում սրողվում են եկեղեցական դոկտրինայի հակասությունները, ավանդական թեմատիկան մատուցվում է արդիականացված ձևով:

Պաշտամունքային տարրեր արարողությունները իրար հաջորդելով, նպաստում են զգայական նրանգավորում ունեցող կրոնական զգացումներների առաջացմանը, հավատացյալի գիտակցության մեջ գերբնականի գաղափարի ձևավորմանը: Այդ արարողությունների մշտական կրկնությունը, որոնք ունեն միանգամայն կոնկրետ գաղափարախոսական պոտենցիալ, կարող է

⁶ III. Энцикл. Происхождение религии, М., 1954, с. 99.

պայմանավորվել բավականին կայուն կրոնական համոզմունքների և պատկերացումների ձևավորումը:

Սովետական հոգեբանությունը շի կարող սահմանափակվել հավատացյալների կրոնական գիտակցության համակարգի ուսումնասիրմամբ: Նրա կարևոր խնդիրն է աթեիստական աշխատանքի հոգեբանական պրոբլեմների հետազոտումը և առաջին հերթին՝ գիտաաթեիստական դաստիարակության ընթացքում փարոցականների անհատական և տարիքային առանձնահատկությունների ուսումնասիրումն ու հաշվառումը:

Դպրոցում կիրառվող գիտաաթեիստական դաստիարակության համակարգը շի կարող հաջողությամբ գործել առանց սովորողների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելու, առանց նրանց արարքների շարժառիթները ժամանակին պարզելու, աշակերտական կոլեկտիվում աթեիստական հայացքների նկատմամբ դրական վերաբերմունք ստեղծելու:

Դպրոցականների աթեիստական հայացքների և համոզմունքների, գիտաաթեիստական աշխարհայացքի ձևավորման պրոցեսում անհատական մոտեցումը դրսևորվում է՝

— գիտաաթեիստական դաստիարակության կոնկրետ խնդիրների դրվածքում, ուր պարտադիր է կողմնորոշումը դեպի յուրաքանչյուր առանձին անհատը, այդ թվում և դեպի կրոնական անհավատության ու նախապաշարմունքների ազդեցության տակ գտնվող աշակերտը,

— աշակերտների անհատական հոգեկան և բարոյական առանձնահատկությունները հաշվի առնելիս,

— ստացված արդյունքները կանոնավոր ուսումնասիրելու և դրանցից կախված՝ անհատական գիտաաթեիստական ներգործությունների ընթացքում որոշակի ճշտումներ մտցնելու մեջ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև աշակերտի խառնվածքային առանձնահատկությունների, նրա մտավոր, հուզական և կամային հատկանիշների, բնավորության, սովորությունների և զգացմունքների դրսևորման յուրահատկություններին, հասարակական պարտքի ընկերների և շրջապատի նկատմամբ ունեցած վերաբերմունքին, հետաքրքրություններին և ընդունակություններին ուղղվածությանը, արժանիքների նկատմամբ ունեցած կողմնորոշմանը:

Ուսուցման և դաստիարակման պրոցեսում ուսուցիչն ի վիճակի է փոխելու ու զարգացնելու աշակերտի անհատականության և բնավորության առանձին գծերն ու կողմերը: Դրա համար նա պետք է լավ ճանաչի իր սանին, համակողմանի ուսումնասիրի նրա անհատականությունը, որը հատկապես կարևոր է կրոնի ազդեցության տակ գտնվող աշակերտի գիտաաթեիստական հայացքների և համոզմունքների ձևավորման բարդ ու նրբարևույթ գործում:

Ուսուցիչ-դաստիարակը պետք է նկատի ունենա, որ որպես կրոնականության հոգեբանական նախադրյալ հաճախ և ամենից առաջ հանդես է գալիս բացասական հուշական վիճակը: Դպրոցականի հուշաշխարհը աչքի է ընկնում արտասովոր բազմազանությամբ: Այն իր մեջ ներառում է բարոյական, բանական, գեղագիտական զգացմունքներ, իսկ կրոնի ազդեցության տակ գտնվող աշակերտի հուշական աշխարհը՝ նաև կրոնական զգացմունքներ: Կրոնը մարդկային էության ինչ-որ ինքնուրույն և անկախ հոգեբանական դրսևորում չէ: Կրոնական զգացմունքները սովորական մարդկային զգացմունքներ և հույզեր են՝ վախ, զարմանք, սեր և այլն, որոնք երևակայական պատկերացումների ազդեցությամբ ստանում են կրոնական գունավորում, թուկ երբեմն էլ վերածվում են կրոնական հայացքների ու համոզմունքների:

Ինչպես արդեն նշել ենք, ոչ մի բնածին կրոնական զգացողություն գոյություն չունի: Կրոնի ազդեցության տակ գտնվող երեխաների կրոնական զգացմունքները բնականաբար ձևավորվում են նրանց անհատականության կազմավորման գործունեությունում: Ինչպես վկայում են սոցիոլոգիական հետազոտությունները, հավատացյալների մեծ մասի կրոնական գաղափարներն ու պատկերացումները ձևավորվում են մանուկ հասակում: Կրոնական միջավայրում դաստիարակվող երեխային երկյուղածություն, ակնածանք են ներշնչում կրոնական պաշտոնների այս կամ այն առարկաների՝ սրբապատկերների, սուրբ գրքերի, եկեղեցական իրերի նկատմամբ: Կրոնական զգացողությունները, սկզբում հիմնվելով կոնկրետ առարկաներին վերաբերող պատկերացումների վրա, կարող է նախադրյալ հանդիսանալ ավելի ընդհանրացող կրոնական գաղափարի համար, որն այնուհետև կարող է աճելի խորանալ ու ամրապնդվել: Ն. Կ. Կրոնպսկայան ընդգծել է, որ հավատայալ երեխաների կրոնական զգացմունքներին պետք է մոտենալ մեծ զգուշությամբ: Մենք հաճախ բորբոքվին թերազնահատում ենք, թե ինչ ուժեղ ազդեցություն է գործում, հաճախ նույնիսկ ամբողջ կյանքի վրա, 5—7 տարեկան հասակում ունեցած որևէ ապրումը: Եվ պետք է կարողանալ հասկանալ, թե ինչն է հրապուրում, հուզում երեխային այդ տարիքում»⁷

Այն գործոնների թվում, որոնց իմացությունը կանխորոշում է դաստիարակչական պրոցեսի արդյունքները, կենտրոնական տեղերից մեկը գրավում են սովորողների վարքագծի կողմնորոշվածությունն ու շարժառիթները: Մարդու գիտակցության և վարքագծի վրա հաճախ ավելի ու-

⁷ Н. К. Крупская. Пед. соч., т. 6, с. 197.

ծնը ազդեցություն է ունենում գերբնական ներգործությունը, քան տրամաբանականը: Եկեղեցականները հնուց ի վեր հաշվի են առել այդ հանգամանքը, շեշտը հատկապես դնելով հոգեբանության վրա՝ ժողովրդական դանգովածներին գաղափարապես սանձած պահելու համար: Ըստ աստուծու պաշտամունքի սպասավորների կարծիքի՝ կրոնական դաստիարակության ձևերը կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ արհեստական եղանակով հաշտվի ստեղծել հավատացյալների ներսիակ աշխարհ: Այդ պատճառով աստվածաբանները ներշնչում են հավատացյալներին, որ եթե ավելի քան մեծերի հետ հաղորդակցվելը անթույլատրելի է մեծերի համար, ապա դա առավել ևս վտանգավոր է և կարող է կործանարար լինել երեսնաների համար:

Գիտաաթեիստական դաստիարակության համար հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում կրոնական հայացքների անձնային իմաստի պրոբլեմը: Այս պրոբլեմի էությունն այն է, որ միևնույն կրոնական գաղափարները, հավատալիքները և պատկերացումները հավատացյալների և անհավատների գիտակցության մեջ ստանում են տարբեր իմաստ, այսինքն՝ տարբեր կերպ են ներգործում նրանց գիտակցության ու վարքագծի կառուցվածքի վրա: Օրինակ, հավատացյալի համար եկեղեցին սուրբ առարկաների՝ սրբապատկերների, մոմերի, մատուցների զետեղարան է, ծիսակատարությունների վայր: Այդ պատճառով էլ նրա մեջ հաճախ գեղարվեստական զգացումներ է առաջացնում ոչ թե եկեղեցու իրական գեղեցկությունը (այսինքն՝ նրա գեղարվեստական ձևավորումը, ճարտարապետությունը), այլ նրա գործառական կողմը: Հին հայկական և միջնադարյան արվեստը սիրող մարդու համար, որը կանգնած է ավելի մի դիրքերում, եկեղեցին գիտվում է իրեն հայկական ազգային ճարտարապետության նմուշ: Աթեիստի և հավատացյալի մեջ տարբեր զգացումներ են առաջանում նաև կրոնական թմամերով գրված երաժշտական և գեղանկարչական ստեղծագործությունների ընկալման ժամանակ: Հավատացյալի՝ իրականության օբյեկտիվ կողմերի ընկալման մեջ տիրապետում է դրանց պատրանքային և ոչ թե իրական էություն ընկալումը: Հավատացյալի սոցիալ-հոգեբանական ընթացումն արտաքին կարևոր տարր է սոցիալական կողմնորոշումների հետազոտումը և գիտաաթեիստական հայացքների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման ուղիների որոշումը: Առանց դրա հնարավոր չէ սովորողների գիտակցության և վարքագծի վրա արդյունավետ դաստիարակչական ներգործություն ունենալ:

Ինչպիսիքն է սովորողների վերաբերմունքը կրոնի և նրա սպասավորների նկատմամբ: Ցածր տարիքի դպրոցականների մեծամասնությունը սկզբում չի ունենում որոշակի կողմնորոշվածություն: Բացառություն են կազմում հավատացյալ ծնողների, մասնավոր՝ աղանդավորականների ընտանիքների կողմից, որոնք կանխատրամադրված են կրոնական կողմնորոշվածություն ընդունելու:

Աշխատանքի սիրով, ինչպես նաև մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ միայն ուսուցիչների և աշակերտական կոլեկտիվի պլանաչափ, կանոնավոր, նպատակաուղղված ավելիստական ներգործությունն է ընդունելի հաղթահարելու մատերիալիստական գաղափարախոսության ընկալմանը խոչընդոտող այն հոգեբանական պատեղը, որն ընտանեկան կրոնական ավանդույթների և սովորույթների ազդեցությամբ առաջանում է որոշ սովորողների շրջանում: Ինքնաբերաբար գործող կողմնորոշվածությունն էլ հենց, ինչպես հայտնի է, վարքագծի շփոթակցված ավանդական ձևերի անմիջական արտահայտությունն է: Կրոնի ազդեցության տակ գտնվող աշակերտի նկատմամբ ատեիստական ներգործության արդյունավետությունը ձեռք է բերվում նախ և առաջ ավելի մեծ ու դպրոցական կոլեկտիվում դրա անմիջական կողմերի հանդեպ ունեցած բացասական կողմնորոշվածության հաղթահարման շնորհիվ: Դրա հիման վրա էլ հնարավոր է դառնում գիտաաթեիստական հայացքների և համոզմունքների նկատմամբ դրական կողմնորոշվածության ձևավորումը:

Գիտաաթեիստական դաստիարակության պրակտիկան վկայում է, որ հավատացյալ դպրոցականի ունեցած կողմնորոշվածությունը հանկարծակի «բեկման» ենթարկելու փորձերը մեծ մասամբ անհաջող են անցնում և հաճախ հանգեցնում ճիշտ հակադիր արդյունքների, ստիպում դպրոցականին ինքնամիտիվելու, ամբաստանում նրա սխալ աշխարհընկալումը: Առանձին դեպքերում միայն ձևավորված ստեղծոտիպ «պայմեցման» մեթոդը կարող է արդյունավետ լինել: Սակայն շափաղաճ զժվար, զրեթե անհնար է պլանավորել, ծրագրավորել, թե որ դեպքում այդ մեթոդը կարող է օգտակար լինել: Գիտաաթեիստական հայացքների և համոզմունքների նկատմամբ թացասական կողմնորոշվածության հաղթահարումը պահանջում է ոչ թե ճակատային գրոհ, այլ բարդ, զգույշ և վերին աստիճանի շրջահայաց գործողություններ:

Գիտաաթեիստական դաստիարակության արդյունավետությունը կանխորոշվում է նաև սովորողների վարքագծի կոնկրետ շարժառիթներն աստիճանաբար ուսումնասիրելով: Օրինակ, դպրոցականը կատարում է այս կամ այն կրոնական արարողությունը (աղթում է, եկեղեցի հաճախում) ոչ թե նախ այս պատճառով, որ դրանք անհրաժեշտ է համարում «հոգու փրկության» համար, այլ որովհետև դա պահանջում են ավագները: Այստեղ գործողության շարժառիթը չի համընկնում նպատակին, այն ավելի շատ մեծահասակների հանդիմանանքից կամ պատժից

խուսափելու, նրանց բավականություն պատճառելու, խրախուսանքի արժանանալու ցանկություն է: Եթե դրա հետ մեկտեղ Լրեխայի գործունեության առաջատար ուղղությունը սովորելն է, իսկ դրա շարժառիթը՝ աշխարհի մասին գիտելիքներ քաղելու և յուրացնելու ձգտումը, ապա կրոնը ժամանակի ընթացքում այլևս չի հրապուրի նրան, և նա կհրաժարվի դրանից: Որակապես այլ իրադրություն է ստեղծվում, երբ շարժառիթը վերածվում է դորժողության նպատակի: Ուստի սովորողների անմիջական պահանջմունքների և գիտակցական ձգտումների հաշվառումը և ճիշտ կազմակերպումը մի պրոբլեմ է, առանց որի լուծման չի կարող ստեղծվել դպրոցականների գիտաաթենիտական դաստիարակության արդյունավետ մեթոդիկա:

Մեր հետազոտությունը վկայում է, որ դպրոցականների աթենիտական գործունեության դրական խթանների դրդապատճառների զարգացումը միաժամանակ պետք է ուղեկցվի նրանց աշխարհայացքի վրա հավատացյալ ծնողների ազդեցության սահմանափակմամբ, աթենիզմի սոցիալ-մանկավարժական, քաղաքական ու բարոյահոգեբանական նշանակության ի որ և կանոնավոր պարզաբանմամբ, ուսուցչական և բարձր դասարանցիների աշակերտական կոլեկտիվներում աթենիտ պրոպագանդիստների պատրաստմամբ, դպրոցի պիոներական և կոմերիտական կազմակերպությունների գիտաաթենիտական գործունեության համակողմանի ակտիվացմամբ:

Г. А. БАБАЯН—Психологические основы научно-атеистического воспитания.—Живучесть религиозной идеологии требует правильной ориентации в деле научно-атеистического воспитания. В статье обосновывается необходимость глубокого изучения религиозного сознания и поведения, психологии.